



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

36^{րդ} ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 26 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1887

ԹԻԻ 3891

ՄԱՍԻՍԻՍ կը նրատարակ- ուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ ձեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ. Բաժա- նորդագրութեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝ քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար 20 դր2. եւ օտար երկրաց համար 15 Ժը- րանք. Բաժանորդագները դրկելու է առ մատակարարութիւն Սրբեկլի եւ Մա- սիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատուէկ- եան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ազգ. Տեսութիւն. Նորակազմ Քաղ. Ժողովը: Արհեստք եւ արհեստաւորք ի Կ. Պոլիս (Ա. Ֆէթիւ- ճեւն): Ուսումնականութիւն ի Ռոստոմ (Կ. ՂԱՅԱՆՃԵԱՆ): Ամերիկեան Սուրհանդակ. — Զուրերու վրայ բարդ մը, Մարդակերութիւն, Նարնջագոյն օդ, Լինչի օրէնք, Առեւծներու հետ (Հ. Իկինեւն): Ահա. Հայաստանի բարքեր. Սիսակ և Սոսուն, Բը- լիսի մոտիկ (Գ. Պ. ՇԱՀԱՊԵՏԵԱՆ): Կաղաւթ Շաբաթական Լրոց. Արտաքին, Ներքին, Ազգային:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 26 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐԱԿԱԶՄ ԲԱՐԱԲԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Վերջապէս ունինք Քաղաքական Ժո- ղով մը: Չենք գիտեր առ այժմ թէ ի՞նչ պիտի լինի այս Ժողովոյ վերջնա- կան կազմութիւնը, վասն զի անգամոց մեծագոյն մասն հրաժարած է, սա- կայն կը յուսանք որ ի վերջոյ, ինչպէս խաղաղականաւ մը Արեւելի փափաք յայտնած էր, հրաժարողք Ազգին ներ- կայ վիճակն ի նկատ առնելով, պիտի փութան խմբովն ետ առնել իրենց հրաժարականն:

Աշխարհիս վրայ ո՛ր եւ է գործ չէ կարելի առաջ երթալ եւ կանոնաւոր արդիւնք մը տալ եթէ որոշ ուղղու- թիւն մը եւ նպատակ մը չունենայ նա- խապէս գծուած եւ որոշուած:

Այսպէս է նաեւ մեր արդի Քաղա- քական Ժողովոյ և կամ լաւ եւս Պատ- ըրարքարանի համար. հարկ է որ մեր նորակազմ Վարչութիւնն գիտնայ եւ ճշդէ առջի օրէն իւր հետեւելիք ուղ- ղութիւնն, պէտք է որ Ազգ. երեսփ. Ժողովն եւ Ազգ. գիտնան եւ տեղե- կանան այս ուղղութեան որպէս զի ոյժ տան եւ նեցուկ լինին Վարչութեան ամեն պարագայի մէջ:

Ուրեմն ի՞նչ հիմնադիր պէտք է ու- նենայ նորընտիր Քաղ. Ժողովը: Մեք չենք սպասեր եւ չենք ուզեր որ մեզ բերէ մեծ մեծ խոստումներ եւ անի- րադործելի ակնկալութիւններ. ինչ որ կ'ակնկալենք իլ մէ, այն է պարզ եւ գործնական հիմնադիր մը:

Նախ եւ առաջ Վարչութեան պար- տաւորութեանց առաջինն է աւարտել եւ ամբողջացնել նախորդ Քաղ. Ժողո- վոյ սկսած եւ ծրագրած գործերն:

Որովհետեւ Քաղ. Ժողովոյ անդամք զբաղած լինելով չեն կրնար շաբաթը մէկ նիստ բնելով ազգային բոլոր գոր- ծերը վարել, պէտք է որ, ինչպէս ա- ռաջարկած ենք մեր նախորդ յօդուա- ծով, կազմակերպեն Պատրիարքարանի ներքին վիճակն եւ արտօնեն Պատրի- արքարանի զանազան ճիւղերու պե- տերն գումարուելու եւ որոշելու այն ամէն խնդիրներն որք ազգին մեծա- գոյն շահուց չեն վերաբերիր:

Թէեւ Պատրիարքարանի դրամական վիճակը նախորդ Վարչութեան ձեռք ա- ռած միջոցներու շորհիւ բաւական գո- հացուցիչ եղած է, բայց և այնպէս ար- դի Քաղ. Ժողովոյ անկ է այդ վիճակն աւելի եւս բարւոքել, վասն զի առանց դրամի ոչինչ կարելի է գործադրել:

Մեր մէջ մինչեւ ցարդ եկող Վար- չութիւնք աւելի պոլսական գործերով զբաղած են քան գաւառական. ժամ է որ այս սխալ ուղղութիւն վերջ գտ- նայ, վասն զի գաւառներն աւելի մեծ պէտք ունին մեր խնամոց. հարկ է որ ուղղենք զիրենք և դենք զանոնք այն- պիսի շաւղի մը մէջ որով կարող լինին պաշտպանել ինքզինքնին ամէն պարա- գայներու մէջ:

Մեր եկեղեցականք իրաւամբ կը դանդաղան իրենց նիւթական վիճակէն, և խոյս կուտան գաւառական պաշտօն- ներէ գեղերելով Պոլսոյ փողոցներուն մէջ. արդի Քաղ. Ժողովն պէտք է որ իւր ուշադրութեան մեծագոյն առար- կայ ընէ այս վիճակն որ փտանդ կ'ըս- պառնայ մեր եկեղեցւոյ և ազգութեան, նա մանաւանդ երբ ի նկատի առնենք ձիւղուիդաց գործունէութիւնը Հայաս- տանի եւ Կիլիկիոյ զանազան կողմերն:

Այսօր ամէն խորհող հայ ցաւօք կը դիտէ եկեղեցականաց անկեալ դիրքն որ առաջ եկած է իրենց տգիտութե- նէն. կը կարծենք որ ժամանակն հա- սած է այլ եւս խորհելու այն միջոց- ներուն վրայ որոնցմով կարելի լինի մեզ արժանաւոր եւ ուսեալ եկեղեցական- ներ պատրաստել:

Բիշ թէ շատ դաստիարակութեան խնդրով զբաղող մը մեզ հետ համա-

կարծիք պիտի լինի յայտարարելու համար թէ՛ մեր Պոլսոյ վարժարաններն հեռի են գոհացուցիչ լինելէ եւ թէ՛ ձեռք բերուած արդիւնքն չ'փոխարի- ներ այն զոհողութիւններն որք կը լի- նին այս նպատակաւ. թէեւ նախորդ Քաղ. Ժողովն այս մտօք հրահանգներ պատրաստեց, բայց չենք գիտեր թէ մինչեւ ո՞ր աստիճան գործադրուեցան անոնք. ուստի ներկայ Վարչութեան պարտքն է այդ հրահանգներն ի գործ դնել և պատրաստել միանգամայն գա-ւառական վարժարանաց համար յա- տուկ հրահանգներ, որպէս զի Ազգին այս նպատակաւ ծախսած դրամն յու՛մ պէտս չ'վատնուի: Նոր բան մը չպիտի ըսենք երբ յայտարարենք թէ դաստի- արակութեան խնդիրն՝ Վարչութիւնն զբաղեցնող ամենէն մեծ խնդիրն պէտք է լինի:

Դեռ ամենուն միտքն է այն դրժ- ուարութիւններն, որոց բաղկեցանք վերջին կաթողիկոսական ընտրութեան ատեն. որպէս զի այսպիսի պարագայ- ներու մէջ դարձալ չ'դանուինք, Ազ- գային Ժողովն կաթողիկոսական Յանձ- նաժողով մ'ընտրած էր: Արդի Քաղ. Ժողովը պէտք է որ միջոցներ խորհի, որպէս զի միանգամ ընդ միշտ կաթո- ղիկոսական ընտրութեան եղանակ մը որոշուի և ընդունուի:

Մենք այս յօդուածով մասնաւորե- ցինք միայն այն հարցերն, որոնք կեն- սական կարեւորութիւն մ'ունին Ազ- գին համար և որոց լուծումն անհրա- ժեշտ կը նկատենք: Տարակոյս չ'կայ որ Վարչութիւնն ո՛չ նուազ կարեւորու- թիւն պիտի տայ մեր առաջնորդական վիճակաց եւ վանական հաստատու- թեանց կազմակերպութեան, նոյնպէս պիտի փութայ ամեն օգնութիւն եւ քաջալերութիւն տալ ազգային յա- ռաջադիմութեան նպատակով բոլոր Ըն- կերութեանց և ի մասնաւորի Միաց- եալ և Հայուհեաց Ընկերութեանց:

Ինչպէս ասկէ առջի Վարչութիւնք, նոյնպէս և արդի Վարչութիւնն պիտի գործէ՝ իրեն յենարան ունենալով Կայ- սերեկան կառավարութիւնն, Ազգին աջակցութիւնն և ազգային առանձ- նաշնորհումներն, որոց անվճար պահ- պանումն նուիրական պարտականու- թիւն մ'է:

Ահա՛ ըստ՝ մեզ այն հիմնադիրն, ո- ռում պէտք է հետեւի արդի Քաղ. Ժո- ղովն, և այն ատեն կրնայ վստահ լի- նիլ թէ պիտի վայելէ Երեսփոխանա- կան Ժողովոյ և Ազգին համակրութիւ- նըն և օժանդակութիւնը:

ԱՐՀԵՍՏԻ ԵՒ ԱՐՀԵՍՏԱՒՈՐԻ

Ի Կ. ՊՈԼԻՍ

Կարգացի Պ. Կիւմիւշեանի դիտողութիւններն որք իմ «Արհեստք եւ արհեստաւորք» ի Կ. Պոլիս ք խորագրով յօդուածի մասին գրուած էին Մարտի 3887 թուահամարի մէջ :

Պ. Կիւմիւշեան չը ճանչնար զիս, սակայն եթէ չատ հետաքրքրի, թող գիտէ տեղեկութիւն խնդրէ զիս մօտէն ճանչցողէ մը եւ պիտի տեսնէ թէ ո՞րքան շատ կը սիրեմ չորհրդարանը եւր հայուն ընդունակութեան ու ճարտարութեան ի նպաստ է խօսքն. ո՞րքան անկուշտ կերպով, ի՞նչ բերկրանօք կ'ակունջեմ կամ կ'ընթեռնում հայուն բնածին գեղեցիկ յատկութիւնները ճառողները :

Չը գիտեմ թէ պէտք ունի՞մ երկրորդել թէ իմ տեսութիւնը առաւելապէս ստույ Կ. Պոլսեցի հայ արհեստաւոր դասուն էին պատկան : Արդ միանգամ ալ կը գամ ապացուցանել ճշմարտութիւնն այն բանին զոր արդէն ըսի :

Փափագելի էր որ փաստերով ցուցուէր Կ. Պոլսեցի հայ արհեստաւորներու դասին ըրած առաջդիմութիւնը, վերջին կէս դարուն մէջ յորմէ հետէ մինչ անմիջական եւ գրեթէ առօրեայ յարաբերութեան մէջ է գտնէ արեւմտեան ազգերու հետ : Եւ Պ. Կիւմիւշեանէ առաջ ըսի թէ, հայը չը նույնով իւր յետնեալ վիճակին, ստուար մեծամասնութեամբ կը շարունակէ տակաւին պարագլուխ արհեստաւորաց մնալ : Բայց, խնդիրն հոն է որ այդ պարագլուխութիւն կորուսելու վրայ է հանապաջօր այն հանգամանքն զոր ունէր տակէ առաջ : Այս պարագլուխ զմեզ չը յուսահատեցնելու չափով սիրտակաւն է, բայց պարծեցնելու համար շատ անբաւական : Եւ ինչո՞ւ անպատճառ մեք զմեզ բաղդատելով մեր հայրենակիցներին հետ միմիջարեւելիք, չէ՞ որ օտարներու հետ ալ հայ արհեստաւորը ունին գտնէ այնչափ գործ (եթէ չըսեմ աւելի) որքան իրենց հայրենակիցներու հետ : Մեծ պարծա՞նք է մեզ միականի լինելը կոյրերու մէջ տեղ, թէ եւ բաղդատարար բարիք մը լինի :

Օր չ'անցնիր որ օտարը չը գան զետեղուիլ Պոլսեցոյն թիւին խուռի տալով չը համբնն նոցա մօրուքը : Պոլսեցին գտնէ այդ միասնաբեր հոտներին առաջն առնու համար բացարձակապէս սչինչ կ'ընէ : Եւ կ'ընապատէ երկնառք օգնութեան մի : Աւաղ, ժամանակը քանի անցնի, այնքան դժուար եւ հուսկ ուրեմն անհնար պիտի լինի հայ արհեստաւորին կանգնումը :

Պ. Կիւմիւշեան կ'ըսէ թէ «Աւերակացի» եւ այլ գործաւորը հայերէն յետս կը մնան նոյնաչափ պայմանաց մէջ : Եւ շատ բարի, զայդ կը սիրեմ ընդունիլ և փաստի ալ հարկ չը կայ : Խնդիր է միայն թէ յիշեալ ազգերն իրենց հետ միասին աշխարհ բերին այն նպատաւոր պայմանները, թէ չէ գործեր ու գործեր շարունակ աշխատեցուն մինչեւ որ հասան ներկայ վիճակին : Ո՞վ կրնայ քսել թէ արեւմտեան ազգերու այսօրուան քաղաքակրթութիւնն ինքնին առաջ եկաւ հրաշիւք : Նոքա մերինէն ալ աննպաստ հանգամանաց մէջ անյուսաւատ աշխատել են : Կարողացէր արհեստից եւ արհեստաւորաց պատմութիւններն եւ պիտի համարուիք :

«Արեւմտեան քաղաքակրթութեան ար-

դիւնը մեր երկրի սեփականէն ներս մտնէլէն ի վեր մեր արհեստաւորաց ձեռքն ու ոտքը կաշկանդեցան և կ'ըսէ յարգելի Պ. Կիւմիւշեան :

Դա պարագայներու բնական հետեւանքն էր որ ազան թէ անազան պիտի տեղի ունենար, ցորչալի մեր արհեստաւորը նահապետական ընթացքի վրայ մնային : Դա մի չարիք է, այո՛, բայց եղած չարիքն առնել նստելով եւ հառաչելով երկինք նայելով երբէք չը դարմանուիր : Հայ արհեստաւորը կամ պէտք էր որ նոցա հետ յարաբերութեան չը մտնային բնական չինական առմամբ, (որ իրենց ձեռնհասութեան վեր էր քանի որ հպատակներ են) կամ այն է որ պէտք է պատրաստ գտնուած լինէին մըրցելու բաւական զօրութեամբ : Այսպէս ո՞չ առաջինը կրնային ընել և ոչ երկրորդն ըրած ըլլալով, այդ արեւմտեան հեղեղին առաջին զոհերն եղան Պոլսեցիք և զոհերու թիւը կը բազմապատկի զէպի արեւելք :

Ըսել էի թէ «Այլ են ժամանակներն, այլ կեանքերն եւ այլ պահանջները : Հայ արհեստաւորին ձեռքերը կաշկանդող կապերն ինք եւ եթ պիտի քակէ և թէ ի՞նչ պէս և կ'ըսէք հիմա զարմանալով : «Ինչպէս քն ըսի արդէն, ահա մի անգամ ալ :

«Հայ արհեստաւորը իրենց մէջ զարգացնելու են ընկերական համերաշխութեան ոգին եւ իրարու ձեռք տալու են : Եթէ հայ արհեստաւորը դուրէն, օտարէն օգնութիւն սպասէ տակէ վերջն ալ, փայ իրեն, յաւիտեան ո՞չ ք պիտի քակէ նորա ձեռնակապն : Եւ ո՞վ է կերել իւր խեղճն. ո՞ր խեւ օտարը կ'ուզէ որ իւր հացին եղը պակսի : Ի՞նչ իրաւունք ունին հայ արհեստաւորը պահանջել որ իրենց վիճակի բարւոքման համար օգնութիւն լինի իրենց : Միթէ ամեն գասակարգ իրեն յատուկ ցաւ, իւր հոգեւր չ'ունի : Ո՞ր գասակարգ մեր մէջ կատարեալ է ամենայնիւ : Օտարներէն օգնութիւն սպասելը շատ հեռու է, չ'երթանք հոն : մեր մէջն իսկ, կը կարծէք որ, երբէք վաճառականն արհեստաւորին խընդրով կամ գրագէտը վաճառականին հոգեւրով զբաղի եւ որ ի կարգին : Մեր մէջ նոյն իսկ ամեն անհատ իւր անձնական շրջանակէն դուրս ելող խնդրով զբաղիլ երբէք չ'ուզեր :

Եւ ալ, ինձ հետ բոլոր հայք ալ, յարգոյ Պ. Կիւմիւշեան, պօռանք, կանչենք, երգենք թէ, հայն ուղիղ, հաւատարիմ, ժիր, հաստատամիտ, ճապակ, ճկուն, հանճարեղ, հնարաւոր, հեռատես է : Եւ զեռ տակաւին որքան գեղեցիկ ածականներ կ'ուզէք բարդեցէք ասոնց : Կ'ընդունիմ, կը սիրեմ ընդունիլ : սակայն խօսքն երբէք գործ չէ եւ գործը միշտ խօսք է : Անհատին գործին իւր խելութեան պատկերն է եւ խօսքը քամի է : Հաքս գործելով ալ ապացուցանելու ենք մեր այդ բարեմասնութիւնները :

— Արեւի մէջ տնօրէն հայ արհեստաւորին պատմութեան պէս շատեր խնայել եմ եւ եթէ ուզուի ինձմէ, երկու հատ ալ ես կը շարեմ : Գոքա մեծ գործեր չեն : Քրտնասայի մէջ բաղդ շինելն երբէք մեծ գործ չէ եւ բոլորովին այլ է այն ինչ որ ես ըսել եմ եւ կ'ըսեմ : Այսքանն է թէ բաւական սպեղանի լինէր հայ արհեստաւորին վրայ, իմ երազած վիրական խնամը ո՞րքան զիւրացած կ'ըլար : Հայը Արեւի կամ Մարտի Լ կամ Նիւեօրք եւն զնայել է, հոն պատրաստ հացը քան ֆրանսացին կամ ամերիկացին աւելի

սուր տեսել եւ յափշտակել է : հաց չէ ըստեղծել սակայն : չը չ'իմեցէ :

Եւ ի՞նչ անհեթեթ տրամաբանութիւն կ'ըլլար, չեմ կրնար ըմբռնել, երբ ըսէինք թէ որովհետեւ, օրինակ, Այվազովսքին մեծահանձար եւ եզական ծովանկարիչ է, ուրեմն կը հետեւի որ բոլոր հայք ալ տաղանդաւոր նկարողներ են եւ թէ ո՞վ ըսաւ որ բոլոր ֆրանսացիք կամ այլք անխաբ սատանայներ են եւ նոցա հետ մըրցիլն անհնար : Յիմար մարդիկ ամեն տեղ խիստ շատ կան եւ ամենէն լուսաւորեալ կարծած ազգերնու մէջ ամենիկ ապուշներ կան ոյց պէսեր գուցէ երբէք տեսած չենք մեր մէջ :

— Թուրքիացիքս հաց չը մնաց պոռացած ժամանակ օտարը յարաճուն գաղթականութեամբ կը զետեղուին մեր մէջ օրէ ցօր : Արեւելք խօսած էր մի առաջնորդողով Ամասիայի մէջ հաստատուող Գերման գաղթականութեան վրայ : Օտարներու համար Աւետեաց երկրն է մեր երկիրը : Գոքա ո՞չ միայն հանգիստ կ'ապրին այլ եւ կը հարստանան ալ : ապացոյց նոցա մշտնջենի ծաւալումն եւ գաղթականութեան կոյտնն օր քան զօր մեծանալը :

Արեւելք ըսած էր թէ երեք հարիւրէ աւելի հոգիներէ կը բաղկանայ յիշեալ գաղթականութիւնն : անտարակոյս նոքա երեք-երեք չորս-չորս եւն հաւաքուելով ահա այսօր մի ահագին գաղթականութիւն, ամեն կերպով զօրաւոր, մեզմէն աւելի զարգացած - անկուած է մեր սեպհական հողի վրայ : մեր հողին, որոյ տեարք այնքան ապերախտ, այնքան յիմար կ'ըլլեն մինչեւ Ամերիկա կը գնան հաց ծարելու համար :

Եւ մեր տեղային աննպաստ հանգամանքներն աչքի առաջ ունենալով էր որ առաջարկեցի ընկերաբար գործաւոր արհեստաւորաց ընկամ կացութեան : «Եթէ ձեռքը ծալի չը տար և առածն ամեն ժամանակէ եւ տեղէ աւելի հիմա Պոլսեցի հայ արհեստաւորին կը յարմարի մանաւանդ :

«Ամերիկայի, Եւրոպայի մէջ ուսեալ մասնագէտ արհեստաւորք ի չ'ոյշէ կանոնաւոր ապրուստի ստիպուեցան յօտարութեան ապաստանիլ եւն և կ'ըսէ Պ. Կիւմիւշեան : Ահաւասիկ մի ահագին ապացոյց Պոլսեցի արհեստաւորին կործանիչ յետադիմութեան եւ անհետատեսութեան : Այդ մասնագէտք ինչո՞ւ ձեռք ձեռքի չը առնին իրենց հողին վրայ կանգուն մնալու համար : Կամ այն է որ բաւական խելք եւ կամք չ'ունէին, կամ այն է որ իրենք սիրտ չեն ըրած իրենց գիտութեանէն քիչ մ'ալ իրենց եղբարց տալու եւ անսիրտ կերպիւ կռակելին քար նետելով հեռացել են :

Կը զարմանամ արդ թէ, Պ. Կիւմիւշեան այլ եւս ինչ բանի վրայ հաւատք կազմած կը յուսայ հայ արհեստաւորին վերականգնման : «Երբ ուսեալք ասանկ դասաւիթ կը լինին, անուսներն ինչի՞ համար կ'ընեն չ'ընենքու համար : Ինչո՞ւ ասպարէզ չը կայ ըսելով հեռանալ : Օտարին ասպարէզն երկինքէն իջաւ պատրաստ եւ կազմ :

Թուրքիայի արհեստաւորք պարտին իրենց մէջ զարգացնել ընկերական ոգին եւ հաւաքական ոյժերով գիտակաւն այն ամեն ինչ որ իրենց գոյութեան խափանարար լինելու բնութիւնն ունի : Այս կամ այն անհատն իւր ճիւղի մէջ անմիան վարպետ, մեծ հանձար է բոլոր բան չէ : Եւ կը մեզմէն կամ դատուիլ կը լինի եւ իրեն հետ կ'երթան բոլոր իւր հանձարն ալ գիտութիւնն ալ :

Մի շատ վարպետ կոշիկակար կը ճանչնամ ես որ քսան տարի է (ինք կ'ըսէ) անգառար կ'աշխատի եւ այսօր իրեն գոյութիւնը դժուարաւ կրնայ պահպանել: Թէ ինչպէս, ահա ինչ որ ինք պատմած է ինձ.

« Բերայի նորածնութեանց խանութներէն մի քանիին համար կոշիկներ կը կարենք, ըսաւ, ես եւ ինձ հետ տասն հինգէ աւելի վարպետներ: Մթերատեարք մեր շինած կոշիկներն իբր Եւրոպայի ապրանք կը բնէն ժողովրդեան մէջ լինէ: Մեզի ալ չը մեռնելու շափ կտոր մը հաց կը հանեն այս գործէն եւ կ'ապրինք »: Հիմա նայեցէ՛ք ժամանակ մը այսպէս անցնելով այս զգուած եւ յոսաճատ սերունդը կ'սպառի եւ ո՞վ կը յաջորդէ նմա անանկ աննախանձելի պայմանաց մէջ. ո՞ր յիմար հայրն իւր որդին կը նետէ թշուառ եւ անապագայ ասպարէզին մէջ: Հետեւանք այն կը լինի որ մի որոշեալ ժամանակէ զինի Պոլսոյ մէջ կայ կոշիկակար չը լինի որ այլ եւս եւ մեր կը ստիպուինք անպատճառ օտարէն հոգալ մեր պէտքն: Սրհետաւորաց ասպարէզէն այս կերպով իսպառ ջնջուած դասեր գիտեմ եւ ինձ հետ կարծեմ բոլոր արհեստաւորք ալ գիտեն որ անոնց միայն անունը կայ այսօր:

Հիմա այդ յիշեալ տասն հինգ վարպետք եթէ բաւական խելք ունենան միանալու, մի կեդրոնական վաճառանոց հիմնեն գոնէ ասկէ վերջն, անօգուտ կ'ըլլայ: Ո՞ր յանդուգն կոշիկ վաճառականը կրնայ տասն եւ հինգին գէժ մըցիլ, չեմ կրնար երեւակայել: Մինչդեռ այս ընթացք շարունակելով եւ հոսակ ապա իրենց պարէնն հայթայթելէն զատ ոչինչ կրնալով ընել կը վերջանան օր մի:

Նորա՛րք, իրարու վրայ կրթնեցէք եւ ջլ պիտի ընկնիք. ո՛չ որ պիտի կռնակ տայ ձեզի:

Ա. ՖելովԱճԵԱՆ

ՈՒՆՏԱԳԵԱՅՈՒԹԻՒՆ Ի ՌՈՏՈՍԹՕ

Անցեալ շաբթու ճամբորդած էի Ռոտոսթոյ, ինչպէս նաեւ բաւական հայեր, որք եկած էին Տրոփայէ, Ալիպոլյէ, Պրուսայէ, Նիկոմիդիայէ, Սիլիվրիյէ, Մալաթիայէ եւ Ա. Պոլսէ: Սոյն բազմութեան շարժումներէն էր Ս. Թագաւոր եկեղեցւոյն տօնախմբութիւնն որ ամէն տարի Ս. Աստուածածնայ տօնին կը կատարի:

Ս. Թագաւոր եկեղեցին եւ նորա ծոց պահուած Ս. Բեւեռն արդէն ազգայնոց ծանօթ է. իսկ նախադնացութիւնն երբ կ'սկսի, որոշ չէ:

Հին ազգեր իրենց համար սահմանեալ օրեր ունին, կրօնական եւ ազգային տօններ կատարելու. հայք ի կոապալտութեան ունենին շատ մը տօներ. յետ ընդունելոյ զքրիստոնէութիւն, այս տօները նուիրագործեցին Ս. Հարք, եւ հաստատեցին շատ մը օգտակար նպատակներու վրայ, կեդրոն ընտրելով վանքերն զորս սկսած էին փութալանութեամբ հիմնել, վարժարան, հիւանդանոց, անկեղանոց, թանգարան, ձգնարան, կուսանոց եւն: Մէն մի վանք յատկացեալ էր բարեօրոշման մարդասիրական մի նպատակի. տօնախմբութիւնը կը նստադրէին այս ազգօգուտ հաստատութեանց, եւ հեռաւոր տեղերէ ժողովեալ

ազգայնոց մէջ եղբայրական ներդաշնակութեան, Ս. Աւետարանի տարածման, վարուց եւ բարուց ազնուութեան: Յետ յորդման ժամանակի, վանքեր հեռացան նախնի սուրբ նպատակէն. ժողովուրդի (բացառութեամբ) բարեօրոշման եռանդ մարեցաւ, եւ այժմ տօներ կը կատարին ձեւակերպական եւ երգեմն վնասակար եղանակներով:

Նախնի ժողովուրդն իւր հիւանդութեանէն առողջանալու, իւր ամուլ ամուսինէն զաւակ մը ծնելու, իւր արտորէից եւ այգիներէ առատ պտուղ արտադրելու հաւատքով կը խոստանար այս կամ այն վանքն ու խորի երթալ նուէրներով. երկրագործ ժողովուրդն իւր արտերու արդար վաստակէն պոչն անուամբ կը նուիրէր վանքերու, իւր ոչխարաց եւ գառնուկներու գիրուկները կը զրկէր մատաղցու, իւր փեթակներու մեղրին ճերմակէն կ'ընարէր այս կամ այն վանուց բաժինը, վերջապէս իւր հաւերէն եւ հաւկիթներէն անգամ բաժին հանելով. ասոնցմէ զատ իւր սրտի հատոր նորածին զուակը վանքին խոստանալով 7-13 տարու եղած տօնէն երբ երթալու պատեհութիւնն ունենար կը նուիրէր վանքին եւ ապա կը դնէր՝ փոխարէն դրամ եւ այլն վճարելով Միաբանութեան կամ Հոգաբարձութեան: Յարգ եւս կը գտնուի ժողովրդեան գէթ խիստ փոքրաթիւ մասի մէջ այս բարեօրոշման գաղափարներ:

Տօնախմբութեանց նախնի նպատակն այժմ յեղաշրջեալ է. վանքերն ազգի մը հաստատութեան մասն ըլլալուն պէտք է զանոնք բարեկարգել եւ իրենց նախնի նպատակին դարձունել, որպէս զի ամենքն ալ օգտակար լինին Տէրութեան, Ազգին եւ Երկրին: Ս. Թագաւոր եկեղեցին մեր պատմած վանքերի կարգին չըլլալով հանդերձ ըստ բաւականի բարեկարգ է, եւ կը խոստանայ յառաջադիմութիւն:

Քիչ մ'ալ քաղաքին վրայ խօսինք:

Ռոտոսթօ յունարէն կը նշանակէ իբր վարդազոյն լեռ. քովի լեռան գոյն կարմիր ըլլալէն կը կարծուի այս անուն կոչուիլ: Տաճկերէն կ'ըսուի Թէքֆուր-Թաղի. Թէքֆուր ի հնումն կ'ըսուէր իշխանաց. պատմութիւնը կ'ըսէ թէ հոն նստող իշխանին ալ Թէքֆուր կ'ըսէին, թէ եւ ոմանք կը կարծեն Թագաւոր կամ Թագաւոր բառի նոյնիմաստ կամ աղաւաղեալն ըլլալ. բայց Ռոտոսթօ կամ Թէքֆուր-Թաղի չեն հայերէն բառեր, եւ արդէն Թրակիոյ մի գաւառ ըլլալուն չը կրնար հայերէն մի անուն ունենալ, եւ այժմ հոն բնակող հայք 16րդ դարուն գաղթած են Երզնկայէ, Դերջանէ եւ Քէմախի Խուտի գիւղէն, ինչպէս կը հաստատեն անհղական պատմութիւնը:

Թէքֆուր-Թաղի հոսմէական եւ յունական կայսրութեանց ատեն բաւական գէպքերու կեդրոն ըլլալէ վերջ՝ Բուժէլի անցաւ ընդ իշխանութեամբ Օսմանեան բարեխնամ կառավարութեան:

Ռոտոսթօ Մարմարայի եզերաց վրայ շինուած է փոքր բլուրներու եւ լեռնադաշտի միջեւ. ծովախորշն է կէս մահկաճեւ երկու սուր եւ բաց ծայրերով, որուն պատճառաւ նաւամատոյցն ենթակայ է մշտապէս հոլեւիտ եւ ալեկոծութեան եւ է դժուարամատոյց. ցամաքէն չորս ժամ հեռի է Մալաթիոյ երկաթուղւոյ կայարանէն՝ եւ Պոլսէն ութ ժամու ճանապարհ է չողենաւով, որք առաւօտեան մեկնելով Պոլսէ եւ հանդիպելով Պեղատոս, Սիլիվրի, Էրէզլի, երեկոյն կը հասնին Ռոտոսթօ:

Օյը խիստ չոր է եւ առողջարար, ջուրերն անհամ եւ, բայց կրախառն ըլլալուն օգտակար:

Սովորական բերքն է ցորեն, ծխախոտ, գարի, վարսակ, խաղող եւ այլ մրգեղէն, նշանաւոր է ձմերուկն եւ գինին առատ:

Սրհետները սովորական են, չ'ունի մասնաւոր նշանակութեան արժանի յառաջացեալ մի արհեստ: Ժողովրդեան զբաղումն է երկրագործութիւն եւ առեւտուր. ունի կենդանութիւն եւ ապահով ապագայ երկրագործութեան համար, քանզի երկաթուղւոյ գիծը Ռոտոսթոյի եւ նման քաղաքաց շատ մը շահեր յեղաշրջելէ վերջ, Ռոտոսթօ պահած է իւր հարստութիւն իւր երկրագործական հողի ներքեւ:

Քաղաքը կը նստի կառավարիչ մը՝ ընդ իշխանութեամբ Ազրիանուպոլսոյ Ալալիութեան. ունի ամէն դատարաններ եւ ժողովներ՝ ինչպէս ուրիշ Մալաթիայի թաղութեան երկիրներ:

Մալաթիայի թաղութեան նէճիպ պէյ անուն մի բարեկիրթ եւ աշխատասէր անձ. Առաջնորդն է Ներսէս Եպիսկոպոս, Ա. Երուսաղէմի միաբաններէն 70 ամեայ կրօնասէր մի եկեղեցական, որ տասն տարիներէ հետէ կը վարէ իւր պաշտօնը. կայ շատ մը գոնախներ եւ աճէնցիա. բնակիչք կը հաշուին իբր 5,500 տուն, 2,500 ը հայ, 1,500 թուրք, 800 յոյն, 200 ի չափ հրեայ եւ խառն ազգայինք:

Թուրքերն ունին մզկիթներ, դպրոցներ, բայց քաղաքը չ'ունի հնութիւններ. ամենէն հին շէնքն հայրէ 200 տարուան է. Բիւսթէմ փաշա շինած է մզկիթ մը, բաղանիք մը եւ աշտարակ մը, որոյ վրայ է անուանուր մեծ եւ բարձրաճայն ժամացոյցը:

Քաղաքագետութիւնն ունի իբր 2,000 լիւրայ եկամուտ անշարժ կալուածներէ եւ յատկացեալ տուրքերէ, եւ նոր գնած է մի գեղեցիկ ապարանք պարտէզներով եւ շատ բուսաներով. թէ եւ քաղաքի մեծ փողոցներ լուսաւորուած են բեթթօլի կաղերով, բայց դեռ յուսաւորութեան եւ մաքրութեան շատ ջանքեր կը պակսին զորս ժողովուրդը կ'սպասէ նորնորի նախագահէն. իսկ բոլոր ճամբորդաց հետ ես ալ կը ցանկամ նախ նաւամատոյց մը շինուելուն, որպէս զի երթեւեկը անպաշտպան վտանգաւոր գրութեանէն ազատելով այլ եւս ենթակայ չը լինին այն երկիւղներու եւ անկարգութեանց:

Հին տուններ շինուած են կրկնաշարի եւ երբեմն եռաշարի հին ձեւերով բոլորովին գեղջկական, իսկ նոր տուններ եռաշարի եւ Պոլսոյ նմանութեամբ: Հայք ունին երեք եկեղեցի Ս. Թագաւոր, Ս. Խաչ, Ս. Փրկիչ, եւ մի աւերակ՝ որոյ գետինը վէճի ներքեւ է. այլ տարի տեղացիք յարմարած են յունաց հետ փոխանակութիւն մ'ընել. Պատերի քարանդակն արդիւած է, դեռ եւս ի մօտոյ աւելի օգտակար սրոյնով կամ գործադրութիւն մ'ընելու նպատակաւ, քանզի թէոր ներկայ վիճակին մէջ միայն վնասակար է:

Ս. Թագաւոր եկեղեցին որ նաեւ վանքն է շատ անգամ լրագրաց մէջ նկարագրուած ըլլալուն ես մտադիր չեմ վայն նըկարագրել. միայն կը ցանկամ որ տեղային վարչութիւն վանուց եկամուտը գտնելով թէ՛ որք եւ աղքատ տղայոց կրթութեան յատկացնէ եւ թէ կիրականօրեայ վարժարան մը հաստատէ:

Ս. Փրկիչ եկեղեցին Յունաց թաղին մէջ փոքրիկ նորաշէն պայծառ մատուռ մի է շրջապատեալ պարտէզով մը. սոյն եկեղեցին

յատուկ քահանայ եւ ժողովուրդ չ'ունի, արեւելի տիկնայք իրենց զարգերու դրամներով շինած են եւ այժմ թաղականութեան պաշտօնն ալ իրենցմէ ընտրեալ մի քանի տիկնայք կը կատարեն բարեպաշտական հաստատամտութեամբ, եւ քիչ ժամանակէ վերջ բաւական եկամուտներ ունենալու յուսով: Ռոտոսթոյի իգական սեռն ալ խտրաւոր է, եւ նորաձեւութիւնը մեծ գտած է:

Անցնելով Գեֆ թաղը կը տեսնենք Ս. Խաչ եկեղեցին խիստ փառաւոր շինուած Հայոց երկրագործ եւ արհեստաւորաց թաղի մէջ: Իբր 700 տուն կը հաշուին իւր ծովեր:

Այս եկեղեցին հիմնեալ է դարուս ըսկիզբը՝ Պողոս անուն բարեպաշտ մի աղ-գայնոյ փութաջանութեամբ, որոյ մարմինն այժմ եկեղեցւոյ մէջ կը մնայ մարմնաբերուն տապանաբարովի, հետեւեալ գրերով:

Եմ ի ներքոյ այսմ շէրմի, Տէրանեան՝ Պարոն Պողոսի, եղեւ պատճառ շինման Ս. Խաչի, բարեպաշտն էր իշխանի, Որք հանգիպեք այս արձանի, ասացէք դուք հայր մեղայ մի:

ՌՄԿԴ, 1264 թուոյն հայոց:

Փլած է 1844ին, Աւագհինգչարթի օր, տասն անձինք փլատակաց ներքեւ թաղելով: 1847ին նորոգ շինուած է, բոլորովին քարովիր եւ համանման Սիււտարի Ս. Խաչ եկեղեցւոյն: Եկեղեցւոյն դրան ճակատը դրօշմաւ է հետեւեալ արձանագրութիւն.

Ի Պատիւբարութեան Մատթէոսի արհւոյն վեհ Սրբազանի, Առաջնորդութեամբ Տեառն Թադէի արթուն քաջ հովիւն, Մեծ Զարտարութեամբ վեհազեւ անձին Մինաս աղայի, Առաւ պարգեւօք մեծ աշխատութեամբ տեղւոյն Հայ ազգի. (1847):

Եւ երկու կողման պահպաններուն դրանց վրայ գրեալ է.

Այս դուռն Տեառն է եւ արդարք մտանն ի սա, միւս պահարանի վրայ՝

Ոչ միայն արդարք մտանն այլ եւ մեղաւորք խոտովանութեամբ եւ ազաշխարհութեամբ:

Եկեղեցւոյ դաւիթը զարդարեալ է մարմարեայ տապանաքարերով որոց գրերը լիտմամբ աւրած են՝ սալայատակը տափարակ երեւալու կամ անձանքի ալ պատճառաւ մի:

Մեծ կորուստ այսքան արձանագրութեանց աւերման:

Թէեւ գրերն եւ թուականք աւերեալ են, դարձեալ երկրագործի խոյնն ու արօրը, կոշիկակարի սեղանն ու մուրճը, այգեգործի բրինն ու կտրիչը, հիւսնի ուրաղն ու սղոցը, տարազագործի մագոգն ու սալի իջը, մտադործի դանակն ու սրիչը, տիկնանց կարկա-հնն ու ասեղը մէն մի քարի վրայ նկարեալ կը տեսնուին: Եւ զայն սովորութիւնն է եղեր մեւելի արհեստին գործիքը իր տապանաքարին վրայ նկարել:

Ս. Խաչ եկեղեցին ունի իւր դպրոցը, 300 ուստերաց եւ դստերաց ամառական քրսան ոսկւոյ չափ ծախիւք: Ս. Թագաւորի մայր փարթարանի հետ բաղկատմամբ աղ-քատ է, իսկ ժողովուրդի հարստութեան հետ բաղկատմամբ գոհացուցիչ:

Ս. Խաչ եկեղեցին եւ իւր դպրոց աւելի

1) Տիւնեան, որ այժմ կը կոչեն Տիւնե-եան, որոյ մէկ թուն է Ռոտոսթոյի ներկայ քաղաքապետական բժիշկ Տրքթ. Մովսէս Տիւնեան աշխարհային անձն:

կրնան պայծառանալ եթէ տեղւոյն վարչութիւնը չնորհ ընէ Ս. Աստուածածնի երկու չարթի օրն ալ Ս. Խաչի մէջ տօնախմբութիւն կատարելով ու խտրաւորներն հոն ալ հրաւիրէ եւ այլ օգնութիւն չը խնայէ եւ խտրութիւնը վերցնելու աւելի քան ընէ:

Ի վերջ բան Ռոտոսթոյի ցոյցութեան ար-ժանի է երկրագործութեան հոգին ճանչ-նալուն, թուրք, հայ եւ յոյն ժողովուրդի եղբայրապէս ներդաշնակութիւն, սէր եւ միասնութիւն ունենալուն:

Ո՛վ որ ալ այցելէ աստ անշուշտ իւր տը-պաւորութիւնը պիտի փոխուին. անկա-րեւոր մի գիւղաքաղաք լսածը՝ պիտի տեսնէ կարեւոր մի քաղաք, լցուած չէնքով չը-նորհքով աշխատատեղ մի ժողովուրդով: ու-րիշ խնդիր է թէ կան ինչ ինչ թերութիւն-ներ ալ:

Կ. ՂԱԶԱՆՃԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Նիւ-Եմք, 4 Սեպտ.

Քիչիկ շորէն կը քալէ Գուրբու վրայէն. — Մար-դ սկերութիւն. — Նարնջագոյն օղը. — Լինչի օ-րէնք. — Աւելծնեալ հետ:

Այժմ Գիւնի, որոյ անունն անձանքի չէ կարծեմ Մաթիւ ընթերցողաց, անցեալ չարթի մէջ Նիւ-Եմքի ջուրերու վրայէն անցաւ իւր տարօրինակ կօշիկներն հագած: Ս. Խաչ այն անձն է որ քանի մը տարիներ առաջ Լիւսիւրդի կղզիէն Նիւ-Եմքի Պաթըրի Փլէյսն եկաւ: Ջուրերու վրայէն, Հեղուկ մարմնոց վրայէն ալ քալելը բաւական մեծ բարիք կրնայ հասցունել ողջոյն մարդկու-թեան. գէթ նաեւրու խորտակման տեսն խեղճ ճամբորդք քալելով կրնան եղբրք հա-նիւ: Ալ ի՞նչ հարկ կը մնայ նաւակներ դը-նել մեծ չոգ ենաւուց մէջ:

Մեծ քաղաքութիւն մը խոնամ էր Նիւ-Կարայի եղբրաց վրայ ջրվեժէն քիչ վար: Քիչիկ, որ երեսուն տարեկան գողիկացի մ'է, իւր ճամբորդութիւնը կ'սկսի. տարօ-րինակ կօշիկներն, որուն չափն էր 22-2 ա-նունը կուտան լրագիրք, հակառակ իւր 230 փուստ ճամբութեան բազի մը նման լողալ կ'սկսի. վերջապէս չորս ու կէս վայրկեանի մէջ Վրոպէաց Եւ 1,400 ոտք ճամբայ կ'առ-նու Քանտապի եղբրաց համալը:

Յետ ճամբորդութեան, ժողովուրդը կը խանի ջրի ճամբորդի բոլորաբը. կը շնոր-հաւորեն զայն եւ ոմանք նուէրներ կուտան իրեն ի նշան զարմացման եւ համակրանաց: Տր. Լանիլոն անուն մէկը հարիւր տղարնոց ժամացոյց մի նուիրեց ի մէջ այլոց բաղ-մաց: Քիչիկ հրաւիրեալ է ի Փիւնալը:

Չուլի վրայ քալել տարօրինակ բան է, բայց մարդակերութիւնն ալ նուազ տմար-դութիւն մը ու սրտակտուր պատմութեան նիւթ մատակարարող բան մը չէ: Ահա վեր-ջերս պատահած մի նոյնօրինակ դէպքի նկա-րագիրը պարունակող հաւագրի մը թարգ-մանութիւնը. — «Լինչի» օգոստ 30. Յուլի 3 թուականը նամակներ ընդունուե-ցան հոս Քոլին Ֆրանսիէից, Չարլս Սուէր-դի ստորագրութեամբ որ բաւական ատեն առաջ մեկնեցաւ ասկից Ֆորթ Չիլիոյն եր-թալու համար: Նաեւք մի քանի ընտա-նեաց ահաւելի կորուստն ու տառապանաց

լուրերը կը հաղորդեն առաջին անգամ: Կը-նիկ մը՝ որ իւր երեք զաւակներով կը բնա-կէր Լիւթըլ Բէտ Բիվըր գետի եղբրաց վրայ: Երկու մը մէջ՝ Ֆորթ Չիլիոյնէ քանի մը միւսն հետ, ձմրան եղանակին մէջ ի չգոյէ իւր երեք զաւակներն սպաննած ու կերած է զայն: Սոյն մարդակեր մայրն ստորին մտքի տէր արարած մ'է ու շատ քիչ կ'ըզ-գայ իր անբնական արարից վրայ: Ս. Խ-սած է թէ ինք մէկ մէկի ետեւէ՝ ս. Կան-նած է անմեղ մանուկներն որոց մի մէկ մասը խորոված ու միւսը խաշած է ի պա-շար եւ ի կերակուր: Յիշեալի նոյն իսկ խօսքերն են թէ այդ միւսերն անհամ էին ու անյարմար կերակրի: Մարդակերը տա-կաւին չէ ձերբակալուած: Իսկ արդարու-թիւնը չ'ունի որոշեալ սահման մը այս կար-գի մարդասպանները պատժելու: Ո՛ր դա-տաւորը կրնայ լաւագոյն վճիռ մը տալ այս-պիսի պարագայներու մէջ: Երբ նաեւ մը ալեկոծութեան բռնուի եւ դորա ծանրու-թիւնը նաեւակին կորուստ սպաննայ, ար-դեօք աղոր (նաեւակի) մէջ եղողներն ի՞նչ կարգի յանցաւոր պիտի նկատուին երբ ի-րենց ընկերներէն մին կամ երկուքը ջուրը նետելով ազատեն կեանքերին: Սա եւ սորա պէս խնդիրք կրնան երկայնարանու-թիւն մը կոչուիլ, կամ անլուծալի խն-դիր մը . . .

Օհայո նահանգի Մարթինս Ֆէրրի ա-նուն աւանէն Փեյքալի Լեւէթ լրագրին զը-կուած մի թղթակցութիւն հետեւեալ զար-մանալի օգերեւոյթը կը նկարագրէ: Ահա թղթակցին խօսքերն. «Այս առաւօտ ժամ հինգին երբ արթնցայ ծանրութիւն մը կը զգայի գլխի վրայ: Երբ աչքերս բաց սենեակս լեցուած գոյաց նորնջագոյն օղով, շատ չ'անցած բոլոր դրացիներու պատու-հաններէ զլոխներ դուրս ելան զարմա-նալի տեսարանը դիտելու համար: Ողջոյն միջոցն, գետնէն մինչեւ երկինք լեցուած կ'երեւէր սոյն տարօրինակ, պայծառ ու նարնջագոյն ամալով՝ տեղատարաւ անձրևի մը մէջէն: Ամեն ինչ կարծես յարնջագոյն ակնոցի մը ետեւէն կ'երեւէր: Օգերեւոյ-թը վերջացաւ կէս ժամէն, որմէ յետոյ բը-նութիւնն իւր սովորական դոյնն առաւ: Օգերեւոյթին ժամանակ շատեր անթնցած էին այնչափ յանկարծ որչափ կը զարթնու-մէկը կրակի ժամանակ:»

«Լինչ դատաւորն» չարթի մէջ յանի-րաւի անմեղ մը պիտի գոհէր, եթէ ճշմար-տութիւնը չուտով երեւան չի գար: Յովն. Սչաֆըր՝ որ կը բնակի Ճիւրի Սիթիի մէջ, անցեալ օր իւր մի քանի բարեկամաց հետ, տան վարի յարին իջած, հրացանով՝ հետին գրուած դրամի մը զարնելու փորձեր կը-նէին. այս միջոցին փողոցին վրայ գտնուող մի պատուհանէ գնտակ մը դուրս կը նե-տուի ու կը տապալէ յերկիր անմեղ ման-կիկ մը. ուրիշ մը, Ենայտր անունով, տես-նելով մանկան իյնալն յօղնութեան կը վա-զէ. շատ չ'անցած քաղաքի մի կողմէն: Նորեկը խեղճ Ենայտրը մարդասպանը կար-ճելով կը բռնեն զայն եւ չուան մը պատ-րաստելով «Լինչին» յանձնելու կը տանին: մաղ միացեր էր որ խեղճն հոգին պիտի ա-ւանդէր, երբ ճշմարտութիւնն հասնելով զայն կ'ազատէ կախու ելէ: Բայց ցաւալին սա է թէ ամէն ատեն արդարութիւնը չ'ա-նի կրնար հասնիլ անմեղներն ազատելու համար:

Յովսէփ Սէլմա, որ երբեմն կառավար
մէր Պրիմօրիի մէջ, քանի մ'ամիս առաջ
կենդանեաց ցուցանողէսի մը տնօրէնէն
պաշտօն կ'ստանայ. կենդանիները խնամել
Քիչ ատեն վերջ առիւծներու տէրը կը հը
րաժարի և այս Սէլմաը կը հրախրուի նորա
տեղը լեցնել: Խեղճ երիտասարդը բաւա
կան յաջողութիւն ցոյց կուտայ իւր նոր
գործին մէջ, բայց եւ այնպէս շատ կ'եր
կընչի եղբր Նեմուտ անուն մեծ առիւ
ծէ մը:

Անցեալները այն գործի տնօրէնն հը
րաման կ'ընէ թափոր մը կազմել ու չըջիլ
Պրիմօրիի նշանաւոր փողոցներուն մէջ
բոլոր կենդանիներով ի միասին: Աստու մը
թափորը կ'սկսի ի մէջ այլոց Սէլմա գե
ղեցիկ հազուատներով իր երեք առիւծնե
րուն հետ թափորի առջեւէն կը բալէ նը
ռազած ունեւէն անմիջապէս յետոյ: Սոյն
կենդանեաց թափորներն եւ իրենց հը
րամանատուն տանող մեծ կառքն, որ եր
կաթ վանդակով պատած է, ամենէ աւելի
ուշադրութիւն կը գրաւէ: Սէլմա, որ զին
եալ էր վեց հարուածեանով, միշտ կը նայի
եղբր անկապիչ Նեմուտի հրացայտ աչքե
րուն մէջ: Սակայն երբ խեղճ պահապանը
գիտութեամբ ետին կը դառնայ՝ բարեկամ
մը ողջունելու համար, հսկայ անասունը կը
ցատկէ անմիջապէս իր պահապանը բզկտե
լու համար: Այս վերջինը վեցհարուածեանը
մի քանի անգամ կրակելէ վերջ հայրի կը
յաջողի կիսամեռ դուրս ցատկել ու փակել
վանդակի դուռը: Ժողովրդավազ մը կը
կարծէ թէ այս դէպք կանխատեսեալ բան
մէր, բայց սակայն վերջէն խնդիրն երե
ւան կ'ընէ: Մէկ գիշեր առաջ նոյն առիւ
ծի որջին վրայ գնացող մի այլ պաշտօնեայ
նոյ մէջ ալ ոտքը գէպի վար կը կախէ:
Ան առիւծ բարեկամը զայդ տեսնելով կա
տարաբար գործող մարդուն ոտքը վանդա
կէն ներս կը քաշէ լափելու համար, եւ
բոլորովին պարապի ալ չի գործեր, վասնզի
յիշեալ անձն իր ոտքը ազատած ատեն սզ
դին գնացած էր արդէն:

Հ. ԷԿԻՆԵԱՆ

ՍԻՍԱԿ ԵՒ ՍՈՍՈՒՆ (5)

ԲՆՈՒԹԵԱՆ ՍՈՒԱԿՆԵՐ
(ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՔԵՐ)

ԺԳ.

Օրն արդէն տարածման էր՝ եւ Գե
ղեցիկ պատմութիւնն երկատեւած: Մըկ
րօն թարգմէջ հանուածի պատուէրը կատա
րել տալու գործողութեանց մէջն էր: Նար
գիլ խաթուն իւր նենգամտութեան խը
րամներով կաշխատէր այդ գաւազեղի մէջ
թողնել Սիսակը: Թարգմէջ հանուած իր տուն
վերադառնալով յայնչափս գոհ եւ ու
րախ էր, եւ իր այդ ուրախութիւնն կատա
րեալ պիտի լինէր այն պարագային միայն,
երբ կատարեալ ապաքինում կորուզանար
տալ այդ գործաւոր երիտասարդին, ուս
տի խորին մտածման մէջ էր, եւ Սոսունը
տեսնելու միջոցը կը փնտռէր:

Պ. Միրօն Սիսակի նոր ննջարան պատ
րաստել տուած էր, ժամ 12ին կը մերձե
նար ներս մտաւ նա Սիսակի բով այն պա
րագային որ, Գեղեցիկն իր խօսից թելը

դեռ նոր խաւած ու ինքն ու իր եղբայրն
հեկեկանաց մէջ ինկած էին: Միրօն տես
նելով այդ վիճակի մէջ իր հոգեհատորները,
կայծալէ զարնուող ծառի մը նման թմրե
ցաւ կեցաւ... Ձաւակներն իրենց հօր այս
վիճակը տեսնելուն լուցին, Գեղեցիկն ոտ
քի ելաւ, հօր ձեռքն համբուրեց. զի, այն
օրը՝ զեռ տեսած չէր զինքն, յետոյ Սիսակի
անկողնոյ մօտ գնացին, Սիսակի վիճակն
հարցուց հայրն ու խնդրեց որ ոտքի ել
նելով, իր նոր ննջարանն երթան: Սիսակն
որ գիտէր թարգմէջ հանուածի վարպետու
թեան գաղտնիքը, ներքին բերկրաւք մը
զգալով, ալ եւս կրկնել չը տուաւ այդ
խօսքը: Կամացուկ մ'ոտք ելաւ, հապաւ իր
կարմիր բաճկոնն և նախաւուն չալուարը, վը
րան առաւ իր հօր տառապանիկի ձեւ աչքն,
հօր և Գեղեցիկի օգնութեամբ վերին կա
լասուն կամ բացերեւը գնացին՝ ուր պատ
րաստեալ էր իր անկողնի տարբեր առաջի
նէն թէ՛ գիշերով և թէ՛ ձեռով: Քիչ մը ոտքի
վրայ շարժեցաւ Սիսակը, արեւելեան կողմի
պատուհանէն Տանուտէր Սիրունի դրան վրայ
նայեցաւ, ուր խաթունն նստած կը խօսէին
Սիրունի տան քնանիքն որոց մէջն էր Սո
սունն՝ որոյ աչքերը շեղակի առանց իրեն
բով եղողներին զգացնելու՝ Սիսակի ննջա
րանի կողմը կը հայէին: Այս ժամուն զի
րար նշմարեցին և ինչե՛ր անցան անոնց
սրտէն: Սիսակն իր գոյն փոխեց, դարձեալ
մարմնուք մ'եկաւ վրան, անմիջապէս ան
կողնին մտաւ ու իր պայծառ աչքերը դո
ցեց...

Պ. Միրօն տակաւին բան մը չը գիտէր
Սիսակի և Սոսունի մասին, բայց Գեղեցիկին
որ տեղեակ էր խնդրոյ հանգամանաց, հաս
կեցաւ Սիսակի արտի կրակին դարձեալ բը
ռնկիւն, ուստի փութեաց թարգմէջ հա
նուածի օգնութեամբ ջուր լեցնել այդ հոր
դեհի վրայ...

ԺԴ.

Նրեկոյ է, ժամ 12ն անցած, յոգնած
և վատտակարեկ դիւղացիք իրենց ցորեկուայ
տածանելի զբաղումներէն ազատելով ամեն
ոք իր տունը վերադարձած էր, ունի իր
մանկիկ գիրկն առած, ունի իր մօր բով նըս
տած, ունի իր զաւակներով ու դրացիներով
չըմպատուած կը խօսէին օրուան երկրա
գործական գէպերի վրայ, կեանքի հան
գամանաց մասին և գիւղական պիտոյից
վերաբերումով: Գեղեցիկը չը գաղթեցաւ,
թարգմէջ հանուածի դուռը գնաց, թարգմէջ
հանուած տուն չը գտաւ, իմաց տուին որ
աղբիւրէն չէ վերադարձած:

Գեղեցիկը անհամբեր իրաց վախճանին,
անհամբեր իր եղբոր ապաքինման, անհամ
բեր Սոսունի տեսութեան, փոքրիկ սափոր
մ'ուսի վրայ միակողմանի դրած, աղբիւրէն
ջուր առնելու պատրուակաւ՝ գիւղի աւագ
աղբիւր գնաց:

Բանաստեղծական մի երեկոյ էր, կիս
ամսեայ լուսնոյ պայծառ լոյս մը՝ գեղեց
կութիւն եւ փառք սիրած էր ամեն կող
մը: Այդ փառաց մէջ ընկնում գիւղի սի
րուն եւ հօլաթեւ հարսները, հրեշտակաւոր
օրիորդներ եւ սղաւնամիտ կոյսեր: Ա
ւագ աղբիւրի չորս կողմը իրենց սափորներ
չարած խաւով խաւով կայներ եւ օրուան
խնդիր եղող իրաց եւ անցից վրայ կը խօ
սէին կանացի պարզ ճոռմարանութեամբ:
Գեղեցիկին երբ մտնեցաւ աղբիւրին զեռ
սափորը զեռին չը գրած, գիտեց որ
թարգմէջ հանուածն Սոսունի հետ՝ այդ խաւ
բերէն փոքր ի՛նչ անջատ գէպէ գէպ իրարու

շատ մօտ կայնած, կը խօսէին այնքան ցած
եւ հաճոյքով որ Գեղեցիկն հաստատուեցաւ
իր կարծիքով:

Վար ի՞նչ իր ուսէն Գեղեցիկին ջրի սա
փորն, կամացուկ մը զեռին դրաւ, մօտե
ցաւ նախ մի խմի, քանի մը խօսք փո
խանակելէ ետք, պատճառելով հեռացաւ՝
թարգմէջ հանուածի և Սոսունի մօտ գնաց:
զլուսն թեթեւ բարեւով և ակամայ ժպի
տով մը մերձեցաւ անոնց:

Բարի գոյուտ, ըսաւ թարգմէջ հանուած
Գեղեցիկին: Ե՞րբ ես եկեր:

Շնորհակալ եմ, թարգմէջ հանուած, այսօր
կէս օրը կտարելէ ետք:

Ի՞նչպէս եկաք, չէ որ դեռ քանի օր յա
ռաջ գնացիք:

Եղբորս հիւանդութիւն լսելով չը համ
բերեցի:

Տեսա՞ծ էք եղբայրնիդ, ի՞նչպէս է,
այսօր ես գնացի բժշկելու զինքը: Շատ աշ
խատեցայ, իր ցաւի պատճառը գտայ, եւ
դարմանի վրայ կը մտածեմ:

Հազար շնորհակալութիւն, թարգմէջ հա
նուած: Դուք բարի մայր մ'էք, եւ մօր մը
պէս կը մտածէք իմ սիրելի եղբայր Սիսակի
վրայ, ձեր այդ բարեաց իմոյ երկինք վար
ձահատոյց լինի, մենք տկար արարածներ
ենք:

Աստուծոյ օգնութեամբ եւ Ս. Սարգսի
ձեռամբ, պիտի ամբեմ եղբայրդ:

Ս. Սարգիս նեղութեան մէջ եղողներին
օգնական է, ինքն հասնի իմ եղբոր:

Այս խօսքերի միջոցին Սոսուն լուռ եւ
եթ կը մնար, երբ թարգմէջ հանուած՝ իր
խօսքը վերջացնելով «Գիշեր բարի» ըսելով
կը հեռանար եւ Սոսունին «Ըսածներս չը
մոռնաս» պատուիրեց:

Թարգմէջ հանուած հեռացաւ, Գեղեցիկ
եւ Սոսունի մտերմական խօսակցութեան
վարագոյրը բացուեցաւ:

Թարգմէջ հանուած կ'երեւի թէ ձեր հետ
կարեւոր գաղտնիքի մը վրայ կը խօսէր, որ
վերջին պատուէրն ալ չը մոռցաւ կրկնել,
հարցոյց Գեղեցիկը:

Սոսուն եւ Գեղեցիկ ի մանկութենէ կը
սիրէին զիրար և ջերմ մտերմութիւն մը կար
իրենց մէջ, ուստի թարգմէջ հանուածի պատ
ուէրի մասին այնքան չը ծանրացաւ:

Այս սիրելի Սոսուն, եղբայրս մեծ տագ
նապի մէջ է, նորա այն գեղեցիկ գէպն որ
լուսնի բոլորակի կը նմանէր, այնպէս գեղ
նած եւ թումած է որ տեսնողը չը հաւա
տար թէ նա առջի Սիսակն է, միշտ ա՛յս
ու վախ կը քաշէ, եւ երբեմն թուրակի
պէս քոյ առաւը կը տայ: Չը գիտեմ թէ դու
եւ ինք ի՞նչ կապ էք կապած ձեր մէջը:
Խնդրեմ, ըսէ՛ք ինձ թէ դուք ալ կը ցան
կաք եղբորս, ինչպէս նա ձեզ...

Քոյր իմ Գեղեցիկ, խիստ ծանր հար
ցում մը կ'ընէք ինձ, հարցում մ'որոյ պա
տասխանն զգացում եւ զգայնութիւն ու
նեցող մանկամարդ կին կամ օրիորդն իր
մէջը կրնայ գտնել: Դուք չէ՞ք լսած այն ա
ւածը որ կ'ըսէ, «Սրտի սիրածը գեղեցիկ
կըլայ» ու քանի որ մենք պարապ մ'ունինք
աշխարհը մտնելու չըմանալի մէջ ոտքը
կոխելու, միթէ քոյ եղբորմէն աւելի սիրուն,
կորիճ եւ խելացի ընկեր մը պիտի կրնամ
գտնել Դեռ դու չ'եկած, քիչ մ'առաջ թար
գմէջ հանուածի հետ այս նիւթի վրայ էք կը
խօսէինք, նմա պատմեցի թէ ինչպէս կրակ
եւ բոց մը կը վառէ սիրտս, թէ ո՛րքան
գիւրբները անբուն կը լուսնեն, թէ ի՞նչ
պէս մոլորէ ինձ իր տնունը:

Գեղեցիկը նկատելով որ Սոսունը այս

բառերն արտասանած միջոցին նորա ծովա-
փայլ աչքերը լճանալով, աղի արտասուեաց
մարդարտածեալ կըր կաթիլները իր հրե-
ղէն դիմաց վրայ ակտոններ բանալով վար կը
սահէին, չ'ուզեց այլ եւս երկարել հարցու-
մները, խօսքը կարճ կապելու համար այս-
պէս ըսաւ .

Կ'ուզե՞ս տեսնել իր հիւանդութեան մէջ
եղբայրս :

Ինչպէ՞ս կարելի է, միթէ մեր երկրի սո-
վորութիւնն չէ՞ք Կիտեր . տեսնողները ի՞նչ
պիտի խօսին . . . Ո՞վ է տեսեր որ օտար
օրիորդ մ'օտար երիտասարդի մը հիւանդու-
թեան այց երթայ : Երանի՜ թէ այս սովո-
րութիւնն չը լինէր . եւ մարդկային շարա-
շուք բաժնատաններէ զերծ լինէինք : Գիշեր
եւ ցորեկ անքուն Սիսակի գլխու վերեւը
պիտի նստէի, նորա երեսին թառող ճան-
ճերը քէլի ու զինք իմ թաշկինակով հովա-
հրէի : Ո՞հ որքան ուրախ եւ ո՞րքան երջա-
նիկ պիտի համարէի ինքզինքս՝ երբ ձեռքս
իր սուրբ ճակտին դնելու վայրկեանին ար-
ժանանամ . . .

Այս խօսքերը տակաւին Սոսունի բերա-
նըն էին, սիրտը փղծկեցաւ եւ կցկտուր
թող տուաւ այդ զրոյցը . . .

ԺԵ .

Գեղեցիկը, որ իր անուան նման ունէր
նաեւ գեղեցիկի սիրտ եւ խելք, Սոսունին
մենտոր լինելու դերը բռնեց, ըսաւ թէ Թար-
վէզ հանումը եթէ ուզէ կրնայ դիւրացնել
ամեն բան, պէտք է գնամ զինք տեսնել :

Թարվէզ հանումը խօսած է ինձ այդ
մասին, և իր վերջին պատուէրն այդ բանի
համար էր զոր կը կրկնէր, ըսաւ Սոսուն :

Արեմն միասին գնանք Թարվէզի քով :

Գիտէք որ կոյս աղջիկ մը համար շատ
ծանր է առանց իր ծնողաց հրամանին գի-
շեր ատեն տեղ մ'երթալ եւ ուշանալ : Զի
սափորները տուն տանինք, ու ես մօրս
կ'ըսեմ թէ իմ +այր - քէր *) Մկրտի Գեղեցի-
կը կ'երթամ տեսնել որ այսօր իր կեսրանց
(ամուսնոյ) գիւղէն եկած է եւ ինքը փա-
փազ յայտնեց : Մայրս որ չափէն աւելի կը
սիրէ զին և ձեր մասին ալ մեծ համակրանք
մը կը տածէ, անպահով եմ որ, թող պիտի
տայ ինձ ձեզ ընկերանալու . երթանք ու-
րեմն, երթանք, դանդաղելու ժամանակ
չը կայ :

Ձոյդ քայլերով աղբիւրի առջեւ կը գտն'
ուրկէ արդէն ցանցարներ էին ջուր առնող
միւս կանանց եւ աղջկանց սափորներն, ան-
միջապէս սափորին իրենց ուսոց վրայ աշ-
տանակած ու վերէն նոցա կանթերէն մէկ
ձեռքով բռնած կը քալեն ու կը խօսին
քաղցր քաղցր :

Ես ալ քոյ հետ այսպէս սափորով ձեր
դուռը կը գամ կայնիմ, որպէս զի մայրդ
զիս տեսնէ ու ձեզ հրաման տայ, կ'ըսէ
Գեղեցիկը :

Լաւ մտածեցիր, երթա՛նք :

Նրեք - չորս վայրկեան չ'անցած Սոսու-
նինց դրան առջին կը գտնեն զիրենք . Սո-
սունը՝ ջրի սափորն որ 25 օխայի մօտ ծան-
րութիւն ունէր այնպէս իմն վար կ'առնէ,
որ կարծես թէ, թեթեւ փետուր մը լինէր
իր շարժածը, ներս կը տանի զայն և իր մօր
քով կը մօտենայ՝ որն որ թորվան գլուխը
նստած՝ իր ընդոծինը կը կերակրէր, և հա-

*) Սովորութիւն մը կայ Հայաստանի մէջ՝
+այր - քէր եւ եղբայր - քէր լինիլ, մեծ Զատիկի
առաւօտ մէկ մէկու ձեռք բռնած Եկեղե-
ցոյ մէջ խաչ եւ Աւետարան համբուրելու
եւ «Ողջոյն քեզ Նշարայր Քրիստոս յարեալ»
ըսելու անշինք կապով :

մենտութեամբ մ'անոր ականջին տակէն այս
խօսքերը ցած ձայնով մը կը փոփոսայ .

Մկրտի Գեղեցիկը դուռը կայնած է,
կը փափագի որ իր հետ դուրս ելնեմ տե-
սութիւն մ'ընելու :

Ինչո՞ւ ներս չը հրամցուցիր . ե՞րբ ե-
կած է :

Այսօր եկած է : Զրի սափորն ուսի վրայ
է, աղբիւրէն միասին եկանք, արդէն ժա-
մանակն ուշ է, ներս մտնել չ'ուզեր :

Սոսունի մայր՝ Վարդ Տիկին, որ մաս-
նաւոր համակրանք միշտ կը տեսնուէր Գե-
ղեցիկի եւ Սիսակի հետ, ու քանի որ վերջ-
նոյ հիւանդութիւնը լսած էր, պատեհ ա-
ռիթ կը համարէ մինչեւ դուռն ելնել Գե-
ղեցիկը տեսնել ու մէկ երկու խօսք փոխա-
նակելէ ետք դառնալ, որոյ համար վար կը
դնէ իր ձեռքէն այն խոշոր շերտի (քէֆճէ)
որով Լաւ, Էլեւ, հարեալ եւ եղած մը կը
լեցնէր տան մէջ սեղան նստողներին . դուրս
կ'ելնէ Գեղեցիկին իր դիմաց կը տեսնէ :

Ինչո՞ւ այդ տեղ կեցած էք, ներս եկէ՛ք,
քիչ մը խօսինք . չե՞ս գիտեր որ իմ աղջկան
հաւաքար կը օրեմ գրեց :

Շնորհակալ եմ, Վարդ խաթուն, ժա-
մանակ չը կայ, եղբայրս տկար է, պաղ
ջուր ուզեց, վեր պիտի երթամ շուտ մ'ի-
րեն հասցնելու . խնդրեմ, քոյրս, Սո-
սունին հրաման տուէք իմ հետ գալ Թար-
վէզ հանումի տուն քիչ մը տեսնուինք . ես
ալ հոն պիտի մնամ գիշեր, եղբորս հսկելու
համար, կը փափագիմ որ ընկեր մ'ըլլայ
քիչ մը խօսինք :

Սոսունի գալ զիւրին է : Երբորք ցաւն
ի՞նչ է . ո՞ր տեղէն կը գտնուի . խեղճ
տղէն . որքան կը սիրէի ես զինքը, եւ իր
անուշ լեզուն . սառնայի աչքը կոյր լի-
նէր, միթէ գէշ մարդիկ աշխարհէն կըտ-
րած էին որ ցաւն Սիսակին փակուի, կ'ըսէ
Վարդ խաթուն :

Աստուած ձեր բարուն վրայ հարցնէ .
Վարդ խաթուն, անցեալ մէկ քանի օր բա-
ւական նեղուած էր, բայց այսօր՝ Թարվէզ
հանումի խորհրդով անգամստութիւն ընե-
լով, քիչ մը լաւ կ'երեւի :

Աւրախ եմ, եւ կը մտղմեմ որ կատա-
րեալ բժշկութիւն գտնէ այնպէս սիրուն
երիտասարդ մը : Սոսուն, դու ալ Գեղեցիկին
հետ կ'երթաս, բայց աշխատէ չուտ վե-
րադառնալ, հայրդ որ լսէ ձեր բացակա-
յութիւն իմ վրայ կը բարկանայ, երթա՛ք
բարեաւ, աղջիկներս : Սիսակին բարեւս յի-
շէ՛ր : Սոսուն, չուտ դարձիր . . .

Գեղեցիկի եւ Սոսուն տեսնելով իրենց
բաղձանաց իրացումը, ուրախութեան եւ
խնդրութեան եռանդով մտան Թարվէզ հա-
նումի տուն : Թարվէզ հանումը երկու զա-
ւակ ունէր, մին արու եւ միւսն էգ : Արուն
պանդխտութեան ելած էր եւ էգը ամուս-
նացուցած : Փոքրիկ եւ բոլոր տուն մ'ունէր
որոյ կեդրոնի մէջ շինուած Թոնրի հիւսի-
սակողով պարզած էր իր գլուխին անկո-
ղինը, եւ առանց զգեստները հանելու վը-
րան նստած էր՝ իր ժամագրութեան կ'ըս-
պառէր :

Բարի՛ երեկոյ ըսաւ Գեղեցիկ, Թարվէզ
հանում, մինակ ես, քեզի պաղ ջուր եւ
աղին հիւր բերի :

Աստուծոյ բարին . շատ ուշացա՛ք, կերե-
ւի թէ դուք ալ ձեր գաղտնիքն ունիք :

Ի՞նչ գաղտնիք պիտի լինի մեզ քեզմէ
ծածուկ, ըսաւ Գեղեցիկը, դու մեր խոս-
տովանամայրն ես, ինչ որ երբ արդէն գի-
տես :

Գ. Պ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

(Շարունակել)

Ք Ա Ղ Ո Ւ Ա Ծ

Շ Ա Բ Ո Ւ Ա Կ Ա Ն Լ Բ Ո Յ

Սեպտ. 19 էՆ 25

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Շարժուս մէջ Բ. Դուռն ստացաւ Ռու-
սիոյ ուղղած վերջին ծանուցագրոյն պա-
տասխանը : Այդ պաշտօնագրով, Բեդրըս-
պուրկի դահլիճը կը յայտնէ թէ պուլխարա-
կան լանդրոյն կարգադրման համար Թուր-
քիոյ ներկայած բարեփոխման մի քանին
կ'ընդունի, իսկ երեք կէտերու մասին բա-
րեփոխումներ ու վերապահումներ կը յայտ-
նէ : Նախարարաց խորհուրդը կը խորհրդ-
դակցի այս պահուս, իւր հետեւելիք ուղղու-
թեան եւ տակը պատասխանին վրայ :

— Լ. Զեբուր իւր հինգ շարժի աւուր
թուով կը ծանուցանէր թէ Զարը Քորհէ-
նակէն իր մայրաքաղաքը վերադառնալուն,
Ռուսիա չըբարեբախան մը պիտի ուղչէ մեծ
տէրութեանց, յայտնելով թէ ըստ որում
ի դերեւ ելած են իւր Զանքեր Պերլինի գաշ-
նագրով նախատեսուող օրինաւոր վիճակ
մը հաստատելու համար ի Պուլխարիա, Ռու-
սիա ինքզինքն այլ եւս կապուեալ չը նկա-
տեր այդ դաշնագրով :

— Յրանաացի ուսուցչաց և դաստիարա-
կաց արմատական մասը ձեռնարկեց Վար-
ժապետական Միութիւնն մը կազմելու,
ինչպէս կան արհեստաւորաց միութիւններ,
ի պաշտպանութիւն վարժապետական ար-
հեստաւորութեան շահուց : Բայց Կառա-
վարութիւնն որդիլեց բացարձակ, յիշեցնա-
լով թէ քա՛ն որ ի Յրանաւ վարժապետ
ուղղապէս Կառավարութեան կը վարձա-
տրուին, քաղաքային պաշտօնէից համա-
հաւանար են, և անոնց պէս, չեն կրնար
միութիւններ կազմել իրենց մէջ :

— Վիլհէլմ Կայսեր որդեմար, հոկտ. 15
սկսեալ բոլորներէն լեզուաւ ուսուցումը սի-
տի ջնջուի Բոլշէի նահանգին ամեն վար-
ժարանաց մէջ :

— Նօր Տեչչէ Ալէմյան Զայրուի կը ծա-
նուցանէ թէ Բոլշէի նահանգին լեհական
վարժարանաց նկատմամբ որում ու ուղում
ի գործ պիտի դրուի Արեւելեան Բրուսիոյ
նահանգին վարժարանաց մէջ եւս (Այսինքն,
բրուսիական Լեհաստանի լեհական վարժա-
րանաց մէջ՝ դասախօսութիւնը այսուհետեւ
գերմաներէն պիտի աւանդուին, եւ ո՛չ լե-
հերէն, որպէս ցարդ) :

— Տըպլինի Քաղաքապետ, «Ազգային
Դաշնակցութեան» կեդրոնական մասնախմ-
բին գումարման նախագահելով, Դաշնակ-
ցութեան անդամներն յորդորեց ամեն կիւ-
րակի դուստրիլ, հակառակ կառավարութե-
ան արգելքին, մինչեւ որ Իսլանաւ ըս-
տանայ ինքնօրինութիւն :

— Մանէ-Կարաբաշ կը կարծէ թէ Ան-
գլիոյ եւ Ռուսիոյ միջեւ մերձեցման խօսք
կայ, չնորհիւ ուս իշխանի մը առաջադրե-
ալ ամուսնութեան ընդ անգլիացի իշխա-
նուհոյ մը :

— Յօդէնդներուն դէմ հարաւարեւմտե-
եան Ափրիկէի գերման գաղթականները
պաշտպանելու եւ Ափրիկէի այդ մասին մէջ
եւս գերմանական ազդեցութեան ոյժ տա-
լու համար, գերման Կառավարութիւնը
զէնք եւ ուղեւորները զրկեց իւր հայրե-
նակցաց որք կը գտնուին Ափրիկէի այդ
կողմն :

— Իտալիոյ եւ Հապոկաստանի միջեւ տն-
կախ մնացած խնդրոյն արդի վիճակը սա է,
ըստ Հոմէ տրուած տեղեկութեանց:

Իտալեան Կառավարութիւնը ծանոյց
անդլ. Կառավարութեան թէ միշտ գոհու-
թեամբ պիտի ընդունուի Վիքթորիա Թա-
գուհւոյն միջնորդութիւնը. բայց հարկ է
նախապէս տեղեկանալ Հապոկաստ Թագաւորին
առաջարկութեանց: Իտալեան
Կառավարութիւնը խնամով պիտի ընէ հա-
պէշական առաջարկներն: Հետեւապէս, Լոն-
տոնէ պաշտօնական հետադիր մը զրկուեցու-
ցով հան Թագաւորին: Բայց Իտալացիք կը
վստահան թէ խորամանկ Հապէշը զիտմամբ
պիտի ուշացնեն իրենց պատասխան, որպէս
զի զինուորային գործողութեանց ձեռնար-
կելու յարմարագոյն եղանակին մէջ, այն է
անան եւ ձմեռն՝ Իտալացիք բան մը չկա-
րենան ընել: Այս հապէշական հնարքին առ-
ջեւն առնելու համար Իտալացիք կը պատ-
րաստուին այնպէս իբր թէ նոր պատերազմ
մը մօտալուտ լինելը: Նոր զօրք կը զրկուի
Մատուա, եւ նոր զօրավար մը հրամատար
կը կարգուի Հապէշաստանի վրայ քաշել
կոչուած իտալեան բանակին:

— Վիլհէլմ Կայսեր բարձր մ ջամուռ-
թեան կը վերագրուի Փրանքո գերմանա-
կան սահմանադրի նոր խնդրոյն շուտա-
փոյթ կարգադրութիւնը:

Ն Ե Ր Ք Ի Ն

Իմփաշը Իմփէիար անուն պատուանշանն
հաստատուած է Սուլթան Մահմուտ Կայսեր
օրով եւ է խիստ հազուագիւտ, որովհետեւ
նոյն ժամանակ մէկ քանի անձանց միայն
գրուած էր: Այս պատուանշան, զոր ու-
նեցողը մեծ առանձնաշնորհումներ կը վա-
յելեն, յորդոց որդի կը ժառանգուի:

Սուլթան Մահմուտ Կայսերն այդ պատ-
ուանշանը նուիրած էր Արտաքին գործոց
նախարարի խորհրդական Վսեմ. Տատեան
էֆէնտիին մեծ հօրն, ոյր մահուամբ զայն
ժառանգած էր նորա որդին արսիքն Յա-
րութիւն էֆէնտիին հայրն, որմէ նաեւ Ն.
Վսեմութեան մեծ եղբայրն հանգուցեալ
Աւարել պէյ: Արդ, գոհութեամբ կը ծա-
նուցանեն թէ Վսեմ. Սուլթանն հրամայած
է որ այժմ եւս Վսեմ. Յարութիւն էֆէն-
տի Տատեան գործածէ յիշեալ Իմփէիար Իմ-
փէիար պատուանշանը:

— Երրորդ կարգի Մէծիալէ պատուա-
նշան տրուեցաւ Տիգրանակերտի երեւելի-
ներէն եւ տեղոյն Խաթէի ժողովոյն ան-
դամ Մինասեան Մեծ. Յովհաննէս էֆէն-
տիին:

— Ամսիկի երկրորդ աստիճան տրուե-
ցաւ Տիգրիկի երեւելիներէն Հայրուհեան
Կարապետ էֆէնտիին:

Սպիտի աստիճան՝ Տիգրանակերտի պարս-
կական փոխ-հրապատու Թաշեան թովմաս
էֆէնտիին:

— Անուղղակի տրոց վարչութիւնն հը-
րատարակեց օմանեան մարտտանց 1302
տարւոյ վիճակագրին որ գոհացողիչ ար-
դիւններ ցոյց կուտայ. բոլոր մարտտանց
հասոյթը աւելցած են. բաղդատմամբ նա-
խորդ տարւոյն, Ներածութիւնը 69,952,213
ըրաշխ. առուելութիւն մը ցոյց կուտան,
արտածութիւնը 65,105,794 զրաշխ եւ մար-
ային հասոյթը 6,721,208 զրաշխ:

— Նախարարաց խորհուրդն որոշեր է
երկաթուղեաց միացման գծերու շինող ըն-

կերութեան առաջարկել որ ընդունի Իւս-
քիւպ-Վրանեայի գծին առաջաւակ չահա-
գործումն: Առաջարկեալ գիտաւոր պայ-
մանը սա է որ, ընկերութիւնը մէն մի քի-
լոմէրի խառն հասութիւն վրայ առնու 7000
Փրանք, իսկ մնացեալ հասոյթը՝ բաժնուին
100 ին 55 ընկերութեան եւ 100 ին 45 ը
կառավարութեան թողուելով:

— Տրապիզոնի գաւառին կառավարա-
կան երկրաչափ կրօնադէպէնտի Խօրա-
սանճեան նոյն պաշտօնով Սեւանիկ փոխադ-
րուած լինելով, մայրաքաղաքս եկած է ուս-
տից իւր պաշտօնատեղին պիտի ուղեւորի:

— Աթէնքէ առ Թաքէն ուղղեալ հեռա-
գիր մը կը պատմէ թէ անցեալ ուրբաթ
իրիկուն Սթալէի անուն անձ մը եւ իւր
երկու ընկերք, Աթէնքէ հեռու տեղ մը թա-
կարդի մէջ կը ձգեն օտմ. դեսպան Ֆէրի-
տուն պէյն որպէս զի սպաննեն զնա. սա-
կայն հեղինական ոստիկանութիւնը ժամա-
նակին խնայելով կը ձերբակալէ չորագործ
ներն:

Հեռագիրը կը յարէ թէ Աթէնքի ոստի-
կանութիւնն այս պարագային մէջ մեծ յա-
ջողակութիւն ցոյց տուած է եւ թէ տեղ-
ւոյն լրագիրք չարագործաց խտուր պատ-
ժուիլը կը պահանջեն:

— Բէժիկ վարչութիւնը բազմաթիւ նոր
դէտեր հաստատած է Պոլսոյ եւ շրջակայից
մէջ մարտնչողութեան առաջն առնելու
համար:

— Ճարանի կայսեր եղբորորդի Քոմաճիւ
իշխանն եւ իշխանուհին որք բազմաթիւ
հետեւորդներով մայրաքաղաքս կը գտուին
չարաթէ մի վեր, այցելեցին Պոլսոյ պատ-
մական վայրերը, պալատներն ու կարեւոր
չէմբերը եւ քանիցս կայս. պալատ հրա-
ւիրուեցան ուր սիրալիր մեծարանք ըն-
դունուեցան: Վեհ. Սուլթանը չորեքշաբ-
թի զիշեր սեղանի հրաւիրեց զանոնք: Ն.
Վահագնութիւն Օսմանիյէի ականակուու
պատուանշան ընծայեց իշխանին, առա-
ջին կարգի Շէֆաքաթ իշխանուհւոյն, եւ
այլ եւ այլ պատուանշաններ անոնց հետե-
ւորդաց:

— Հաւաքարացի հարիւր-քսան զբօսա-
լիկներն եւս չարաթի մը չափ մայրաքա-
ղաքիս ոյլ եւ ոյլ կողմերը շրջելէ ու Վեհ.
Սուլթանին հրամանաւ պատուամարտելէ
յետոյ, Աթէնք ուղեւորեցան ուստից Բէշ-
դա պիտի վերադառնան:

— Վեհ. Սուլթանին հրամանաւ՝ Երմա-
կան բարձր յանձնաժողով մը կազմուած է
ընդ նախագահութեամբ Պետական Խօր-
հրդոյ Օթէնալիի ճիւղին նախագահ Վը-
սեմ. Մահմուտ Ճէլալէտտին վաշայի եւ
անդամակցութեամբ հաշուակալութեան զի-
ւանի նախագահ Վսեմ. Աբիֆ էֆէնտիին,
Պետական Խորհրդոյ Օթէնալիի ճիւղին ան-
դամ Վսեմ. Ապրօ էֆէնտիին, մարտտան
բարձրագոյն ժողովոյ նախագահ Փորթու-
գալ Վսեմ. Միքայիլ էֆէնտիին եւ կեդրո-
նական պաշտօնատանց ընկիւզ Վսեմ. Մէծ-
տէտտին էֆէնտիին:

Սոյն յանձնաժողով պաշտօնն է քննել
Տէրութեան երմաղոյնն եւ հաւատարա-
կուել զայն, կարգադրել արտասովոր ծախ-
քերն ազդու եւ լուրջ միջոցներու կիրառ-
մամբ, ելի:

Սոյն յանձնաժողով ի նիստ կը գումարի
ամեն օր:

Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Նորընտիր Քաղաքական Ժողովոյ ան-
դամներէն ութն հրաժարական զրկած են
առ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն որ ծա-
նուցանելով եւ շնորհաւորելով նորընտիր
ժողովականաց պաշտօնն, ի ժողով հրաւի-
րած էր զանոնք չորեքշաբթի առաւօտ ի
Պատրիարքարան, որպէս զի դիւան կազ-
մեն եւ դործի ձեռնարկեն: Սակայն նոյն
օրը մէկ ժողովական միայն ներկայացած,
ուրիշ հրաժարական զրկած, իսկ մնացեալ
հինգը պատասխանած չը լինելով, Ն. Սըր-
բազմութիւն դարձեալ հրաւիրագիր զրկեց
Քաղաքական Ժողովոյ բոլոր անդամոց որ-
պէս զի յառաջիկայ երկուշաբթի, ժամ 5ին
ի նիստ գումարին ի Խորհրդարան Ղալա-
թիոյ: Ս. Պատրիարքն անընդունելի դա-
տելով ուրիշ ժողովականաց հրաժարումն,
յատուկ նամակաւ խնդրեց ի նոցանէ որ
հաճին ընդունիլ ազգովին իրենց յանձնուած
պաշտօնն:

— Երեքշաբթի օրը Զմիւռնիայէն մայ-
րաքաղաքս հասաւ Արթ. Վահան վարդա-
պետ Տէր Մինասեան, որ այցելութեան
պաշտօնով կրեալ կը գտնուէր եւ անտի
Իզմիր գնացած էր տասն օրի չափ յառաջ:

Տ. Վահան վարդապետ ուղղակի Պատ-
րիարքարան գնաց եւ Ամեն. Ս. Պատրիարք
Հօր ներկայանալով ծանոյց թէ պատրաստ է
Ազգ. կեդր. վարչութեան մատուցանել կը-
րէտէի Ս. Կարապետ եկեղեցւոյն եւ կալ-
ուածոց յատակագիծն որ վաւերացեալ է
Քանտիայի տեղական կառավարութեանէն:

Կը լսենք թէ Տ. Վահան վարդապետ իւր
հետ բերած է 7-800 տարուան ձեռագիր
գրքեր, զորս պիտի յանձնէ Ս. Պատրիարք Հօր:

— Յաւ օր կը ծանուցանենք թէ ՎՍԿԳ.
ԿՈՍՏԱՆԴՆԵՅԵՆՏԻ ԿՈՍՏԱՆԴՆԵԱՆ, եղբայր
հանգուցեալ Կոստանդ վաշայի, որ երկար
ժամանակէ հետէ անկողնոյ կը ծառայէր, իւր
մահականացուն կնքեց չորեքշաբթի ի Երեւա,
ի հասակի 48 ամաց:

Կոստանդ էֆէնտի անդամ էր Առեւտր-
ական առաջին Դատարանին եւ վարած
էր դատական ուրիշ կարեւոր պաշտօններ
եւ ի մէջ այլոց Դատական նախարարութեան
Պատժական Գործոց տեսչութիւնը (Ճէր-
մէ-թէի): Զայս պաշտօն վարած է 4-5 տարի,
եւ իւր այս պաշտօնավարութեամբ նշանա-
ւոր հանդիսացած է՝ առաջին անգամ օրի-
նելով Պատժական Դատարանաց վիճակա-
գիրն: Եղած է նաեւ Արտաքին Գործոց
Պաշտօնատան գրասենեկաց միոյն պետ,
կուսակալի օգնական եւ: — Ազգային
Սահմանադրութեան առաջին անգամ գոր-
դործադրման միջոցին երեսփոխանական
ընտրութեանց քանի մը թաղերու հսկող,
Ոստանական Խորհրդոյ անդամ եւ: ու վեր-
ջին անգամ անդամ էր Նուրեան էֆէնտիին
վարչութեան: Ունէր իւրաքանչեւ երկրորդ տա-
տիճան, Մէծիոյցի եւ Օսմանիյէի Գ կարգ,
եւ երեք օտար տէրութեանց պատուանը-
շաններ:

Յուդարկաւորութեան հանդէսը կատար-
ուեցաւ հինգշաբթի օրն ի Ս. Երրորդ ու-
թիւն եկեղեցւոյ քերայի:

— Սրբանձնութեան Գեր. Գարեգին ե-
պիսկոպոս իւր անունը Մշոյ վանահայր-ա-
ռաջնորդի ընտրելեաց ցանկին մէջ գտնուե-
լուն համար զիտողութիւն ըրած եւ մի-
անգամայն ծանուցած լինելով թէ չ'ուզեր
նախագահել վանահայր-առաջնորդի ընտ-
րութեան համար գումարելի ժողովոյն, կը-

Guerlain de Paris.

15, Rue de la Paix.

ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԿԸ ՅԱՆՁՆԱՐԱՐԵՆՔ ՀԵՏԵԻՆԱԼ ՀՈՏԱԼԷՏ ՆԻԹԵՐԸ Eau de Cologne Impériale. Sapoceti, օճառ արդուզարդի համար: Ambrosial cream, օճառուտ հալժ ամբրոզիա մարդու համար: Crème de Fraises մորթիքի համար: Poudre de Cyprès արգելանքի համար: Stilloide փայլ տալու համար: մազերուն և մորուզովանքի համար: Eau Athénienne et Eau lustrale հոտ խնկելու և մաքրելու համար: Գլուխը: Alcoolat քին: Eau de Chypre արդուզարդի համար: Թաղկինակի համար: Eau de Cochlearia ակառնելու համար: Eau de Chypre արդուզարդի համար: Թաղկինակի համար: Հոտաւէտ իւրթեր՝ Héliotrape, Pao Rosa, Shore's caprice, Maréchale Duchesse, Marie Christine.

բոնական ժողովն որոշեց հեռագրել Ն. Գերլայնին և Գերլայնին օրվան օրվան իւր կողմէ եկեղեցական մը նախագահ կարգէ եւ ինչպէս որ միացման գործն առաջ տարաւ, նոյնպէս ընտրութեան գործին ալ գլուխ կանգնի:

— Կուտինայի առաջնորդական փոխանորդ կարգուեցաւ խառնամեան Արթ. Պօղոս փարզապետն:

— Ուստի պատկերազարդ առաջին շաբաթավերջին, Վաթնաւա իլլիւստրացիոն սեպտեմբեր 3ի թուոյն մէջ հրատարակուած է Ամեն. Ս. Պատրիարք Հօր մէջ գեղեցիկ կենդանագիրն, հանգերձ կենսագրական ընդարձակ տեղեկութեամբ:

— Փաշի մէջ գոհութեամբ կր կարգանք թէ Մեծ. Տօրգօր Մանուէլ պէյ իւր ինքնաճեան, վերջին ժամանակներս Վեհ. Սուլթանի պաշտօնը շնորհաց արժանանալէ յետոյ, անդամ ընտրուել է Բարիքու մանկանց առողջապահական հանդիսին փարջութեան եւ այս առթիւ ոսկի շքադրամ ըտտացել է: Տր. Իւրիւճեան բաւական ժամանակէ հետէ անդամ է արդէն Ֆրանսայի առողջապահական ընկերութեան:

— Արմանանք թէ Գարգանէլի ազգ. երկսեռ վարժարանի աշակերտուհիք այս օրերս եօթն կտոր ընտիր ձեռագործներ պատրաստելով ի նշան երախտագրութեան ընծայած են առ Բարձր. Աբրահամ փաշա, որ իբր տառն-երկու տարի ստալ կարեւոր գումար մը նուիրելով յիշեալ վարժարանին շինութեան ի կատար հանուելուն պատճառ եղած էր: Գարգանէլի քարոզիչ Արթ. Գաբրիէլ Ս. վարդապետ ձեռնադրուած է, Թաղական խորհուրդն եւ վարժարանի Հոգարարձութիւնը շնորհակալեաց յատուկ նամակաւ մը յիշեալ ձեռագործ նուիրները զրկած են առ Ն. Բարձրութիւն:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱՐԱՆ

Հայերէն է Գաղղիերէն

Աշխատասիրեաց

ԿՈՄԻՏԱՍ Ա. ՈՍԿԵԱՆ

Սոյն աշխարհաբար բառարանին տպագրութիւնն՝ որ ինչ ինչ պատճառներով յաւանայս դադրած էր առ ժամանակ, այժմ վերականգնուած եւ երկոտասաներորդ թերթն արդէն լոյս տեսած է:

Բաժանորդագիրն է մայրաքաղաքիս համար 10, գաւառաց համար 15 դահեկան արծաթ:

Բաժանորդ գրուել փափաքողք, պարտին ուղղակի դիմել նշան Կ. Պէրպէրեան տպագրատունն ի Կ. Պոլիս:

1176

1—3

Վասն Արտօնատեառն Տնօրէն-Պատասխանատու Ս. ՏՈՒՄԱՆՅԱՆ

ՏՊԱԳՐ. ԱՐԵՒԵԼՔ ԵՒ ՄԱՍԻՍ ԼԲԱԳՐԱՅ

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԵԱՅ

Բաւելի երկնաւորաց Բաժնէրստեան 106րդ Հիմակահանութեան պարբերութիւն

Թ.	Ֆր.	Թ.	Ֆր.	Թ.	Ֆր.	Թ.	Ֆր.
1,088,632	300,000	702,993	1,250	96,267	1,000	1,350,548	1,000
707,181	25,000	778,396	»	196,148	»	1,358,478	»
325,665	10,000	1,004,677	»	404,867	»	1,380,718	»
352,610	»	1,193,426	»	662,181	»	1,384,090	»
106,725	2,000	1,320,173	»	701,138	»	1,401,068	»
174,013	»	1,417,092	»	723,018	»	1,405,348	»
685,917	»	1,509,267	»	839,041	»	1,417,342	»
901,184	»	1,676,134	»	901,374	»	1,515,765	»
938,548	»	1,804,013	»	938,546	»	1,539,286	»
1,418,747	»	4,304	1,000	953,190	»	1,723,861	»
235,601	1,250	26,836	»	1,096,563	»	1,926,832	»
605,159	»	26,840	»	1,119,721	»		
646,274	»	61,833	»	1,235,099	»		



ՄԵՏԵՍ՝ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆ

ԵՐԿԱԹՈՒՂԵԱՅ ՄԵՏ՝ ՆՈՐՈՒՂԵԱՅ

(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Շերմակ ընկած մազերուն գոյն, վերնիճ ու գեղ կուտայ: Կը նորոգէ անոր կեանքը, ոյժը և աճումը: Գլխու թեփը շուտ մը անկեղծութիւն կ'ընէ: Իր անուշ հոտը առատ է ու հեշտալի:

«Մէկ շէշը կը բաւէ:» Այդ փորձը ունեցան ամենքը որոնցմիտքաբունած մազերը իրենց ընկան գոյնին դարձան, և ճաղատ տեղերը մազով ծածկուեցան: «Կերկ չէ, և ամենէն զեան մը չընէր: Թէ որ կ'ուզես թարմ մազ ունենալ և բոլոր կենացդ մէջ պահել, առանց ուշանալու շէշ մը ստացիր պէլէն Ս. Ա. ԱԼԼԵՆԻ Զաւառ-Խարկան Խալէ Նորոգողն» (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Երկրորդ և անգլիացի գեղագործներու քով: Կը գտնուի Ն. և Ժ. Գանդիլը եղբայրք բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էմմա Քարուան, Անգլիական միջերանոց, Երկրորդ Գալտըրմ. և Իզի-տօր Լազանտէլա 453, Բերա Մեծ փողոց:

ՀԱՐԱՆԵԿԱՆ ՆԱԿԱԿՈՒՆՑ

ԳԵՂԵՑԿԱՆՈՒՂԵԱՅ ՄԵՐՍՆՈՅ ԳՈՅՆԸ, ՄԻՇՏ ՆԱԿԱԿՈՒԹԻՒՆ, ՄԻՇՏ ԹԱՐՄ:

Նշագմունք մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիւթներէ և բազմաթիւ փոշիներէ: Առաջին անգամ գործածելով ալ, որ քանի մը վայրկեանի գործ է, պիտի անտուի իսկոյն որ երեսը, վիզը, թէքերը և ձեռքերը պիտի առնուն անոյշ փափկութիւն մը և մարմարի միայն, հանդերձ շուշանի և վարդի գունով և բուրմամբ: Սապոնի գրգռիչ յատկութիւնները կը հանդարտեցուն: Անհետ կ'ընէ մորթի սեւերը, երեսի և ձեռքի ցաները, արեւայրուրը, և ուրիշ ամեն բրտութիւն և բաւարարութիւն: Եւ այս ամեն բանով անկարելի կ'ընէ մատնուիլ թէ արհեստով գեղեցկացուած է:

Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Երկրորդ և անգլիացի գեղագործներու քով: Կը գտնուի Ն. և Ժ. Գանդիլը եղբայրք բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էմմա Քարուան, Անգլիական միջերանոց, Երկրորդ Գալտըրմ. և Իզի-տօր Լազանտէլա 453, Բերա Մեծ փողոց:



ԿԵԱՆՔ, ԱՃՈՒՄՆ և ԳԵՂ ՄԱԶԵՐՈՒ:

ՄԵՂԵՐՈՒ

ՄԵՂԵՐՈՒ ՄԵՂ ԶԵՏԻԿ ՆՈՐՈՒՂԵԱՅ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ճերմկած կամ գունաթափ մազերը. Կը դադրեցունէ անոնց թափելը. Կը մաքրէ գլուխը, կը վերջացունէ թեփը, ու մազերուն նոր կեանք, աճումն, փայլ ու գեղեցկութիւն կուտայ:

Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շիշերու մէջ: Գլխաւոր միջերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Երկրորդ և անգլիացի գեղագործներու քով: Կը գտնուի Ն. և Ժ. Գանդիլը եղբայրք բրիտանական գեղարանը, Բերա, Մեծ փողոց. Էմմա Քարուան, Անգլիական միջերանոց, Երկրորդ Գալտըրմ. և Իզի-տօր Լազանտէլա 453, Բերա Մեծ փողոց: